Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԱՂԱՍԻ ԱՅՎԱՋՅԱՆԻՆ «Ս. ՍԱՀԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՅ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՋԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ԱՂԱՍԻ ԱՅՈՒԱՋԵԱՆ, ՈՐ ՅԵՐԵՒԱՆ

Յարգարժան պրն Այուազեան,

Համազգային մեր նուիրական սրբավայր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից, Ձեր ծննդեան 80-րդ գարեդարձի առիթով, բերում ենք Ձեզ Հայրապետական Մեր օրհնութիւնն ու ջերմ բարեմաղթանքները: Այսօր ուրախութիւնն ունենք անդրադառնալու, որ յոբելեանական հանգրուանը Ձեր կեանքի Դուք դիմաւորում էք հայրենանուէր եւ ազգօգուտ գործերի հարուստ վաստակով, ճանաչուած ու սիրուած հարազատ մեր ժողովրդի կողմից:

Հաւատաւոր հոգով ու որդիական նուիրումով ասպուածապուր գրական Ձեր շնորհը ու բոլոր ջանքերը տարիներ շարունակ Դուք անմնացորդ ծառայեցրել էք հայ մշակոյթին, մեր Հայրենիքին ու ժողովրդին, եւ Ձեր ստեղծագործութիւնները իրենց արժանի տեղն ունեն արդի հայ գրականութեան հարուստ անդաստանում: Մեր ժողովուրդը միշտ գնահատանքով է ընդունել Ձեր պատմուածքները, վիպակներն ու հրապարակախօսութիւնները, որ համակուած են սիրով ու հաւատարմութեամբ մեր ազգային արժէքների ու Հայրենի ժառանգութեան հանդեպ: Մեծ ճանաչում ունեն մանաւանդ Ձեր սցենարներով նկարահանուած կինոնկարները, որոնք հայ կինոարուեստը ներկայացնող գործեր են եւ սիրուելու ու արժեւորուելու են նաեւ հետագայ սերունդների կողմից:

Յարգարժան պրն Այուազեան, մեր սիրեցեալ ժողովրդին ու Հայրենիքին մատուցած Ձեր ծառայութեանց ու վաստակի բարձր գնահատանքով Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Մայր Եկեղեցու

ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ - ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

պատուոյ բարձր շքանշանը:

Մեր աղօթքն ու բարի մաղթանքն է, որ մեր Եկեղեցու բարձր պարգեւի շնորհումը հոգու ուժ ու արիութիւն յաւելի Ձեզ՝ յաղթահարելու մարմնական տկարութիւնը եւ ստեղծագործական նոր աւիւնով գործելու ի սէր մեր ժողովրդի եւ Հայրենիքի:

Շնորհք եւ սէր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ. Ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 9-ն Հոկտեմբերի
յամի Տեառն 2005 եւ ի թուին հայոց ՌՆԾԴ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 320